ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՀԱՊՁԲ-1/8-1

ք. Երևան

25 .10.2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «Տոպազ-95» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ս. Բաբանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 32 646 000 (երեսուներկու միլիոն վեց հարյուր քառասունվեց հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 10-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Սույն պայմանագրով նախատեսված ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Տոպազ-95» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Բաղրամյան 33 Ա,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ,
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1930001125920100
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00010717
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ՊԵՏ	Տնօրեն
Կ. ԱՆԴՐԱՊԵՏՅԱՆ	Ս. ԲԱԲԱՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-1/8-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ ԵՎ ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Բնութագրող հիմնական հատկանիշները	Ապրանքային նշանը	Արտադրողի անվանումը	Ծագման երկիրը
1	Տվյալների մշակման սարքեր	1 Ցանցային սերվերային ուղղորդիչ CCR1036-8G-2S+EM-6 հատ, • Պրոցեսորի հաճախականությունը 1.2 ԳՀg • Պրոցեսորի միջուկների քանակ առնվազն 36,Օպերատիվ հիշողության չափ 16 GB • Պրոցեսոր TLR4-03680CG-12CE-A3,Հիշողության տեսակ- NAND, ծավալը- առնվազն 1 GB • Ցանցային սարքերը ունեն համատեղելի ամրաններ՝ 19 դույմանոց ցանցային պահարաններում տեղադրվելու համար • 10/100/1000 էզերնետ բնիկներ 8 հատ • Հիշողության քարտ 1հատ, տեսակ microSD – 1 GB • SFP+ բնիկ 2հատ, USB բնիկ 1հատ , տեսակ microUSB type AB • Սերիալ բնիկ 1հատ ,տեսակ RS232 • Մուտքային լարումը հաստատուն հոսանքից 18 - 28 վ, • Ունեն պրոցեսորի/Մայրական Սալիկի ջերմաստիճանի էլեկտրոնային չափիչ • Գաբարիտային չափսերը (մմ) ՝ 355x145x44 • Օպերացիոն համակարգ RouterOS Level 6 • Աշխատանքային ջերմաստիճան -20ºC .. +60ºC • Հոսանքի լարման էլեկտրոնային ցուցիչի առկայություն, • Ցանցային սարքերը (երթուղիչներ) ապահովում են կենտրոնական հանգույցի և տարբեր վայրերում տեղակայված հանգույցների միջև IPSEC պրոտոկոլի միջոցով գաղտնագրված տվյալների փոխանցման հնարավորություն: • Օպերացիոն համակարգը 6-րդ մակարդակ - Router OS Level 6 Արտադր. տարեթիվ 2016թ. • Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form) 2 Ցանցային բաժանարար CSS326-24G-2S+RM 6 հատ, • ունեն 10/100/1000 էզերնետ բնիկներ 24 հատ • PoE Մուտք • Մուտքային լարումը հաստատուն հոսանքից 10Վ - 30Վ • Գաբարիտային չափսեր (մմ)՝ 440 x 144 x 44 • Օպերացիոն համակարգ SwOS • Աշխատանքային ջերմաստիճան -40°C .. +70°C, • SFP+ բնիկների քանակը 2հատ	1 Mikro Tik 2 Mikro Tik 3 Mikro Tik 4 Hikvision 5 Hikvision 6Grandstream 7Grandstream 8Grandstream 9Grandstream 10Grandstream 11Grandstream 12Grandstream 13 TrippLite 14 Mikro Tik 15 ITK 16 ITK 17 ITK 18 ITK	1 Mikro Tikls, SIA 2 Mikro Tikls, SIA 3 Mikro Tikls, SIA 4Hikvision Digital Technology Co. 5Hikvision Digital Technology Co. 6Grandstream Networks 7Grandstream Networks 8Grandstream Networks 9Grandstream Networks 10Grandstream Networks 11Grandstream Networks 12Grandstream Networks 13 TrippLite 14 Mikro Tikls, SIA 15 ITK 16 ITK 17 ITK 18 ITK	1 Լատվիա 2 Լատվիա 3 Լատվիա 4 Չինաստան 5 Չինաստան 6 Չինաստան 7 Չինաստան 8 Չինաստան 9 Չինաստան 10 Չինաստան 11 Չինաստան 12 Չինաստան 13 Չինաստան 14 Լատվիա 15 Ռուսաստան 16 Չինաստան 17 Ռուաաստան 18 Չինաստան

		• Հիշողության տեսակ FLASH, հիշողության ծավալ առնվազն 2 MB Արտադրման տարեթիվ 2016թ. • Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form) 3 Մանրաթելային SFP մոդուլ S-3553LC20D 6 հատ, մեկ օպտիկամանրաթելային գծով մինչև 20կմ կապի ապահովում, Արտադրման տարեթիվ 2016թ. 4 Ցանցային տեսագրիչ NVR POE DS-7608NI-E2/8P 2 հատ, •Ունեն Ethernet տիպի 8 հատ տեսագրման մուտք •Տեսագրման լուծաչափը 4CIF առնվազն 5 մեգապիկսել •Մուտքային հոսքը 50 Մբ/վ •Տեսագրման ելք 1xVGA/ 1xHDMI •Կադրերի հաճախական./24-ից 50 կ/վ •Ձայնային մուտք/ելք 1հատ •2 հատ HDD կոշտ կրիչ, SATA տիպի, ծավալը՝ յուրաքանչյուրինը առնվազն 4 Տբ •Ցանցային ինտերֆեյս 1 RJ-45 10/100/1000 Մբ/վ •PoE Ինտերֆեյսների քանակ 8 հատ •PoE առնվազն հզորություն - 100 Վտ •Սնուցումը էլ. ցանցից ՝ լարումը 230Վ, հաճախականությունը 50Հg, •Հզորություն 10 Վտ (առանց HDD և PoE միացման) •Աշխատանքային ջերմաստիճան -10° C – +55°C Արտադր. Տարեթիվ 2016թ. 5 Ներքին IP տեսախցիկ DS-2CD2420F-I- 12 հատ • Լուծաչափը առնվազն 2,0Mpx(1920*1080) • Տեսակ -Cube • Տեսապակի 2.8 մմ • Տեսանելիություն մինչև 10 մ • True day/night -գիշեր-ցերեկ տեսանելիության հնարավորություն, • SD-card • PiR (Passive Infra Red)- ինֆրակարմիր • Ներկառուցված խոսափող • Ներկառուցված բարձրախոս • Smart IPC Արտադր. Տարեթիվ 2016թ. 6 Արտաքին սնուցման բլոկով IP հեռախոսային ապարատ Grandstream GXP1625 - 160 հատ, • ՀԲ(LCD) դիսպլեյ (լուծաչափ 132 x 48 պիքսել) • Ձայն HD-որակի (G.722) • 2 SIP գիծ • 2 Ethernet բնիկ (10/100 Base-TX) • Power-over-Ethernet (PoE) • Հեռախոսահամարների էլ.գրքույկ - մինչև 500 կոնտակտ • 3 ծրագրավորվող ստեղն • միաժամանակյա 3 ուղղությամբ կոնֆերանսի հնարավորություն • Ընդլայնված անվտանգության կոդավորման տեխնոլոգիա (SRTP և TLS			

		արձանագրություններ) • Համատեղելի լինի Grandstream UCM6510 IP ԱՀԿ-ի հետ Արտադր տարեթիվ 2016թ. • Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form) 7 Արտաքին սնուցման բլոկով IP հեռախոսային ապարատ Grandstream GXP2140 12 հատ, • Համատեղելի է Grandstream GXP2200 EXT ընդլայնման մոդուլի հետ • 4,3 դույմ TFT ՀԲ(LCD) դիսպլեյ (լուծաչափ 480x272 պիքսել) • HD-ձայնի որակ • 4 SIP գիծ • 5 ծրագրավորվող ստեղներ • 2 Ethernet բնիկ(10/100/1000 Base-TX) • Power-over-Ethernet (PoE) Արտադր. Տարեթիվ 2016թ. • Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form) 8 IP հեռախոսային ապարատի ընդլայնման մոդուլ Grandstream GXP2200 EXT 16 հատ, • Համատեղելի է Grandstream GXP2140, Grandstream GXV3240, Grandstream GXP2170 IP հեռախոսների հետ • ՀԲ(LCD) դիսպլեյ (լուծաչափ 128x384 պիքսել) • 20 ծրագրավորվող ստեղներ (40 կոնտակտ) • BLF գծի կարգավիճակի ինդիկատոր • Սնուցվում է միացված հեռախոսագծից Արտադր. Տարեթիվ 2016թ. 9 Արտաքին սնուցման բլոկով IP հեռախոս տեսակապով Grandstream GXV3240 4 հատ, • 4,3 դույմ սենսորային դիսպլեյ (լուծաչափ 480x272 պիքսել) • HD-ձայնի որակ • 6 SIP գիծ • միաժամանակյա 6 ուղղությամբ ձայնային կոնֆերանսի, 3 ուղղությամբ տեսակոնֆերանսի հնարավորություն • առնվազն 1 մեգապիքսել CMOS տեսախցիկ • 11 ֆունկցիոնալ ստեղներ, 3 ֆունկցիոնալ Android ստեղներ • Անդրոիդ 4.2 ՕՀ, Google Play Store-ի հասանելիություն • 2 Ethernet բնիկ(10/100/1000 Base-TX) • WiFi (802.11b/g/n), Bluetooth, USB բնիկ, SD քարտի սլոտ, մինի HDMI ելք, EHS • Power-over-Ethernet (PoE+) Արտադր. Տարեթիվ 2016թ. • Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form) 10 Արտաքին սնուցման բլոկով IP ԱՀԿ Grandstream UCM6510 -2 հատ,			

		• մինչև 2000 միաժամանակյա SIP օգտատերերի գրանցում • 200 միաժամանակյա զանգերի հնարավորություն • մինչև 64 միաժամանակյա կոնֆերանսի մասնակցի հնարավորություն • quad-core Cortex A9 պրոցեսոր առնվազն 1GHz հաճախականությամբ, օպերատիվ հիշողությունը առնվազն 1GB DDR3 Ram, Flash 32GB • 1 հատ ինտեգրված T1/E1/J1 ինտերֆեյս, 2 հատ PSTM trunk FXO մուտքեր, 2 հատ անալոգային հեռախոս/Fax-ի FXS մուտքեր, անսահմանափակ SIP trunk միացումներ • 2 Ethernet բնիկ(10/100/1000 Base-TX), Power-over-Ethernet (PoE) • USB բնիկ, SD քարտի հնարավորություն, ինտեգրված NAT երթուղիչ • Ապահովում է համապարփակ պաշտպանություն օգտագործելով SRTP, TLS և HTTPS ապարատային կոդավորման արագացուցիչ • ՀԲ(LCD) դիսպլեյ (լուծաչափ 128x32 պիքսել) • Զանգերի ձայնագրման հնարավորություն • CDR զանգերի մանրամասն գրանցում, 5 մակարդակի IVR-ի հնարավորություն • H.264, H.263, H263+ տեսակոդավորիչներ Արտադր տարեթիվ 2016թ. • Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form) 11 Անալոգային գծերի միացման սարք Grandstream GXW4232 (32 FXS Ports Gateway) 2 հատ, • 32 FXS մուտք, Gigabit Ethernet բնիկ • ՀԲ(LCD) դիսպլեյ (լուծաչափ 128x32 պիքսել) ռուսերեն և անգլերեն լեզուների հնարավորությամբ • 4 հատ SIP սերվերի պրոֆիլներ • Ապահովում է ընդլայնված պաշտպանություն օգտագործելով SRTP,TLS և HTTPS • Համատեղելիություն բոլոր առաջատար IP ԱՀԿ-ների հետ Արտադր տարեթիվ 2016թ. • Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form) 12 Արտաքին անալոգային գծերի միացման սարք Grandstream GXW4108 (8 FXO Ports Gateway) 4 հատ, • 8 հատ FXO մուտք, 2 հատ 10/100Mbps Ethernet բնիկ • Ապահովում է ընդլայնված պաշտպանություն օգտագործելով SRTP • SIP սերվերի այլընտրանքային միացում • Համատեղելիություն բոլոր առաջատար IP ԱՀԿ-ների հետ Արտադր			

		տարեթիվ 2016թ. • Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form) 13 Անխափան սնուցման սարք (19" Rackmount 1U UPS) TrippLite SMX500RT1U -2 հատ • սնուցումը էլ. ցանցից սնուցում՝ լարումը 230Վ, հաճախականությունը 50Հg, • Հզորությունը՝ առնվազն 500VA • Նախատեսված լինի 19 դույմ ստանդարտի կանգնակի համար • Խորությունը՝ ոչ ավելի քան 350մմ • Բարձրությունը՝ 1U (19 դույմ ստանդարտի կանգնակի 1 միավոր) • Լայնությունը՝ 19" (19 դույմ) Արտադր. Տարեթիվ 2016թ. 14 Ցանցային երթուղիչ բաժանորդային կայանների համար RB2011UiAS-RM՝ 2 հատ, • Ունեն 5 հատ 10/100 ցանցային բնիկ, 5 հատ 10/100/1000 ցանցային բնիկ • Ցանցային սարքերը ունեն համատեղելի ամրաններ՝ 19 դույմանոց ցանցային պահարաններում տեղադրվելու համար • Պրոցեսորի տեսակը AR9344, հաճախականությունը առնվազն 650 ՄՀg • Ցանցային սարքերը (երթուղիչներ) ունեն սնուցման աղբյուր, էլ. ցանցից սնուցում՝ լարումը 230Վ, հաճախականությունը 50Հg, • Աշխատանքային ջերմաստիճանը -35⁰C - +65⁰C • Ցանցային սարքերը (երթուղիչներ) օժտված են առնվազն 10 հատ Ethernet բնիկով, SFP, microUSB տիպի AB, Serial RJ45 ինտերֆեյսով: • Ցանցային սարքերը (երթուղիչներ) ապահովում են կենտրոնական հանգույցի և տարբեր վայրերում տեղակայված հանգույցների միջև IPSEC պրոտոկոլի միջոցով գաղտնագրված տվյալների փոխանցման հնարավորություն: • Օպերացիոն համակարգը - Router OS Level 6 Արտադր. Տարեթիվ 2016թ. • Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form) 15 Կանգնակ 19" 6U Rack ITK LWR5-06U64-GF -2 հատ, • 19 դույմ ստանդարտի • Չափսերը (մմ)՝ 600 x 450 (±5մմ) • Դիմացի դուռը ապակիով • Կողային դռներ, բոլոր դռները փականով Արտադր տարեթիվ 2016թ. 16 Կանգնակի առաստաղի հովացուցիչ ITK FM35-2LW - 2 հատ, • Համատեղելի ITK LWR3-06U64-GF կանգնակի հետ • Ցանցին SCHUKO ստանդարտով, էլ. ցանցից սնուցում՝ լարումը 230Վ, հաճախականությունը 50Հg, • Կանգնակի առաստաղին ամրացնելու			

		հնարավորությամբ Արտադր. Տարեթիվ 2016թ. 17 Կանգնակի դարակ ITK FS05-400PI - 2 հատ, • 19 դույմ ստանդարտի (19") • Համատեղելի ITK LWR3-06U64-GF կանգնակի հետ • Մինչև 100կգ բեռի ծանրաբեռնվածությամբ • Գաբարիտային չափսերը (մմ)՝ 483x400x44 Արտադր. Տարեթիվ 2016թ. 18 Հոսանքի բաշխման վահանակ (19" Rackmount PDU) ITK PH22-9D2-P - 4 հատ, • Նախատեսված 19 դույմ ստանդարտի կանգնակի համար • 8 հատ SCHUKO ստանդարտով բնիկ • Ցանցին SCHUKO ստանդարտով, էլ. ցանցից սնուցում՝ լարումը 230Վ, հաճախականությունը 50Հց, • LED ցուցիչ • սնուցման աղբյուրին միացման լարի երկարությունը՝ 2 մ Արտադր. Տարեթիվ 2016թ.			
2	Ցանցային երթուղագծիչներ	1 Ցանցային երթուղիչ բաժանորդային կայանների համար RB2011UiAS-RM՝ -125 հատ • ունե 5 հատ 10/100 ցանցային բնիկ, 5 հատ 10/100/1000 ցանցային բնիկ • Ցանցային սարքերը ունեն համատեղելի ամրաններ՝ 19 դույմանոց ցանցային պահարաններում տեղադրվելու համար • Պրոցեսորի տեսակը AR9344, հաճախականությունը առնվազն 650 ՄՀց • Ցանցային սարքերը (երթուղիչներ) ունեն սնուցման աղբյուր, էլ. ցանցից սնուցում՝ լարումը 230Վ, հաճախականությունը 50Հց, • Աշխատանքային ջերմաստիճանը -35°C - +65°C • Ցանցային սարքերը (երթուղիչներ) օժտված են 10 հատ Ethernet բնիկով, SFP, microUSB տիպի AB, Serial RJ45 ինտերֆեյսով: • Ցանցային սարքերը (երթուղիչներ) ապահովում են կենտրոնական հանգույցի և տարբեր վայրերում տեղակայված հանգույցների միջև IPSEC պրոտոկոլի միջոցով գաղտնագրված տվյալների փոխանցման հնարավորություն: • Օպերացիոն համակարգը 6-րդ մակարդակ - Router OS Level 6 Արտադր. Տարեթիվ 2016թ. • Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form) 2 Արտաքին սնուցման բլոկով IP հեռախոսային ապարատ Grandstream GXP1625՝ - 50 հատ • ՀԲ(LCD) դիսպլեյ (լուծաչափ 132 x 48 պիքսել) • Ձայն HD-որակի (G.722) • 2 SIP գիծ • 2 Ethernet բնիկ (10/100 Base-TX) • Power-over-Ethernet (PoE) • Հեռախոսահամարների Էլ.գրքույկ - մինչև 500 կոնտակտ • 3 ծրագրավորվող ստեղն	1Mikro Tik 2 Grandstream	1Mikro Tikls, SIA 2 Grandstream Networks	1 Latvia 2 Չինաստան

		• միաժամանակյա 3 ուղղությամբ կոնֆերանսի հնարավորություն • Ընդլայնված անվտանգության կոդավորման տեխնոլոգիա (SRTP և TLS արձանագրություններ) • Համատեղելի են Grandstream UCM6510 IP ԱՀԿ-ի հետ Արտադր. Տարեթիվ 2016թ. • Մատակարարվող ապրանքի համար մասնակիցը պարտադիր պետք է ներկայացնի՝ Արտադրողի հավաստման թերթիկը (Manufacturer authorization form):			

Ծանոթություն Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված, գործարանային փաթեթավորման տուփի մեջ, արտադրման տարեթիվը՝ 2016թ. և բարձր:
Ապրանքները մատակարարվելու են վաճառողի կողմից ավան Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման ենթակա ապրանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը ՀՀ (դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Մատակարարման ենթակա քանակներն՝ ըստ 2017թ. համապատասխան եռամսյակների
						4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.
1	Տվյալների մշակման սարքեր	լրակազմ	1	20862000	20862000	1
2	Ցանցային երթուղագծիչներ	լրակազմ	1	11784000	11784000	1

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-1/8-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ., այդ թվում՝		
			Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր, բայց ոչ ուշ, քան 10.12.17թ
1	Տվյալների մշակման սարքեր	30236240/2/10/20	20862000	20862000	20862000
2	Ցանցային երթուղագծիչներ	32411160/2/10/20	11784000	11784000	11784000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի [illegible]
[illegible]ԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Տոպաց-95» ՍՊԸ

Տնօրեն

Ա. ԲԱԲԱՆՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-1/8-1 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԱՊՁԲ-1/8-1 պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն